

իմ, զի իմ է զաւակս եւ լինէն գովասանի, եւ վասն այն զի ասել եւս կարեն պատճառելով զչորեքտասան ամսոյ տղայն գովասանել այսքան: Բայց մեք զբազում ստնդիայս եւ զմանկունս տեսաք մեր եւ օտարաց, այլ սա դրուատելոյ էր իրաւի արժանի՝ եթէ մանրամասնաբար քննեցուք ի հայեցուածն, յունկընդրութիւն բանից, լսողութիւն խրատուց, ժուժկալութեամբ չափ համեստութիւն ըստ ժամու եւ ժամանակի կերակրոց եւ ըմպելեաց, քնոյ եւ արթնութեան եւ ամենեւին համբերող եւ անլաց ի տուէ եւ ի գիշերի: Եւ գրեթէ եթէ լրացեալ էր զհասակն աճողական՝ արփիասփիւռ հանճարոյ լինէր նա ընդունարան եւ լայնատարած ծովու շնորհաց գոլ ասպնջական. զոր եւ հոգոյն տեսեալ զազնըւութիւն անխառն յաշխարհական սահեցմանց լուսափայլութեամբ ներքին մարդովն՝ արժանաւորեաց շուրջ զիւրեաւ պարել զարքունական աթոռովն յօրինօղն եւ ստեղծագործօղն իւր, նմա փառք յաւիտեանս եւ քեզ յերկար կեանս առողջութեամբ եւ զուարթապէս շնորհաւորեսցի:

Եւ այսու զի՞նչ ինձ վէրք՝ եթէ զքեզ ունիմ խընդութիւն ի կեանս իմ, ընդ բազում յուսոյ ապառնեացն ուրախութեան քեւ պատահիլ, զոր ինձ մեղաւորիս շնորհեաց Տէր զքեզ յայգպիսի հասակում պատուոյ: Զի՞նչ ինձ դառնութիւն, եթէ զոր չունէի եւ ետ եւ դարձեալ ինքն էառ առ ի պատիւ իւր արարչութեան: Այլ որպէս զիւրեաւ գտանելին էր իմ եւ ի պակասիլ ծաղկին այնմ ի ձեռաց մերոց, այհայ, ո՞ հանդարտեսցէ զայս քեզ նման բարեկամիդ որպէս թէ գոհ եւ գանկատ ոչ առնել. զի որ ճոռուղէքն զմեզ զուարթացուցանել՝ այսօր տեսաք ի լուել. զի որ որպէս ըզվարդ ծիծաղեալ տեսանիւր եւ ծիծաղացուցանէր՝ այսօր թառամեալ յերկիր անկանէր. զի զոր տեսանէաք ի գիրկս գորովով խանդաղատիւր եւ ի սէր զա-